ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-2

ք. Երևան

«22» 01 2020թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյանի, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի և այլ օրենքների հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **154500 (մեկ հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

---

[22] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 **Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:** Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	«ՋԻԷՆՋԻՔԵՅԳՐՈՒՊ» ՓԲԸ
Ք. Երևան, Սարյան 22	Ք. Երևան, Արշակունյաց 119/12
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Ակբա-Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 900011183010	Հ/Հ 220563330384000
ՀՎՀՀ 02531594	ՀՎՀՀ 01271541
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սաֆարյան	Տնօրեն՝Ա. Գասպարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«22» 01 2020թ. կնքված
ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը** 2020թ
1	50111130/518	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների /համաձայն կից ներկայացված ցուցակի/:	դրամ	154500	1	ք. Երևան	Ծառայության մատուցումներն իրականացվում են համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա

ՑՈՒՑԱԿ

Հ/Հ	Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ՎԱԶ-21154 2012թ. (Vaz- 21154) ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ
1	առջևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/	2857
2	առջևի արգելակման կոճղակների փոխարինում	2142
3	հետևի արգելակման կոճղակ /կոմպլեկտ/	4000
4	հետևի արգելակման կոճղակների փոխարինում	3571
5	օդի զտիչ / 1 հատ /	1785
6	օդի զտիչի փոխարինում	714
7	կայծաբաշխիչ կոճ / 1 հատ /	10000
8	կայծաբաշխիչ կոճի փոխարինում	1429
9	վառելիքի զտիչ / 1 հատ /	1786
10	վառելիքի զտիչի փոխարինում	714
11	անտիֆրիզ / 1 լիտր/	1000
12	անտիֆրիզի փոխարինում	2143
13	վառոցքի մոմեր / 4 հատ /	1714
14	վառոցքի մոմերի փոխարինում	714
15	փոխանցման տուփի յուղ	2143
16	փոխանցման տուփի յուղի փոխարինում	2143
17	շարժիչի յուղ / 1 լիտր/	2357
18	շարժիչի յուղի փոխարինում	1429
19	շարժիչի յուղի զտիչ / 1 հատ /	1429
20	շարժիչի յուղի զտիչի փոխարինում	357
21	ինժեկտորի ֆարսոնկաների մաքրում / 4 հատ /	10714
22	առջևի / հետևի / անվաբացքի կարգաբերում	5000
23	տեխ.զննում	1429
24	համակարգչային դիագնոստիկա	3571
25	առջևի մեղմիչ / 1 հատ /	15714
26	առջևի մեղմիչի փոխարինում	4286
27	հետևի մեղմիչ / 1 հատ /	10714

28	հետևի մեղմիչի փոխարինում	2143
29	ղեկի գնդաձև հոդակապ / 1 հատ /	3214
30	ղեկի գնդաձև հոդակապի փոխարինում	1429
31	անվադողերի հավասարակշռում / 1 հատ /	1071
32	կայունարարի վռան /ութնյակ / - / 1 հատ /	1714
33	կայունարարի վռանի /ութնյակ / փոխարինում	1429
34	դիմապակի մաքրող խոզանակ / 1 հատ/	1786
35	գնդաձև հոդակապ / 1 հատ /	2500
36	գնդաձև հոդակապի փոխարինում	1429
37	կայունարարի ռետինե վռան / 1 հատ /	714
38	կայունարարի ռետինե վռանի փոխարինում	2143
39	ակումուլիատորային մարտկոց /ներառյալ փոխարինումը/ / 1 հատ /	30000
40	ինժեկտորի ֆարսոնկա / 1 հատ /	8571
41	ինժեկտորի ֆարսոնկաի փոխարինում	7143
42	հետևի խլարարի բաք / 1 հատ /	13571
43	հետևի խլարարի բաքի փոխարինում	2857
44	շարժիչի բարձիկ / 1 հատ/	5714
45	շարժիչի բարձիկի փոխարինում	2143
46	փոխանցման տուփի բարձիկ	5714
47	փոխանցման տուփի բարձիկի փոխարինում	1429
48	դիմահար լամպ / 1 հատ/	1786
49	դիմահար լամպի փոխարինում	714
50	հեռահար լամպ / 1 հատ/	1786
51	հեռահար լամպի փոխարինում	714
52	լամպ / 1 հատ/	714
53	լամպի փոխարինում	714
54	վառելիքի պոմպ / 1 հատ/	26429
55	վառելիքի պոմպի փոխարինում	5714
56	արգելակման համակարգի հեղուկ	857
57	խլարարի ռետինե ամրակ / 1 հատ /	429
58	թերմոստատ / 1 հատ /	6429
59	թերմոստատի փոխարինում	2857
60	շարժիչի ջրի պոմպ / 1 հատ /	6429
61	շարժիչի ջրի պոմպի փոխարինում	7143
62	խլարարի կատալիզատոր / 1 հատ /	42857
63	խլարարի կատալիզատորի փոխարինում	8571
64	պոմպ՝ դիմապակին ջրով մաքրելու համար / 1 հատ /	3571
65	դիմապակին ջրով մաքրող պոմպի փոխարինում	714
66	հովացման համակարգի ընդարձակման բաք / 1 հատ /	2571
67	ընդարձակման բաքի փոխարինում	714
68	ընդարձակման բաքի կափարիչ / 1 հատ /	714
69	առջևի մեղմիչի հենարան առանցքակալով / 1 հատ/	5714
70	առջևի մեղմիչի հենարանի փոխարինում	4286
71	առջևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/	6429
72	առջևի դարձյակի առանցքակալի փոխարինում	3571
73	հետևի դարձյակի առանցքակալ / 1 հատ/	5714
74	հետևի դարձյակի առանցքակալի փոխարինում	2857
75	խլարարի վերանորոգում	3571
76	անվադողերի վուլկանացում	714
77	փոխանցման տուփի հանում և տեղադրում, վերանորոգում	21429
78	կցորտման սկավառակ / 1 հատ /	6429
79	կցորտման սկավառակի սալի և սառանցկակալի փոխարինում	9286
80	կցորդման սալ / 1հատ /	11429
81	առջևի ձգաձողի վռան / 1 հատ /	1429
82	կցորդման առանցկակալ / 1 հատ /	4286
83	ղեկի ուժեղարար / 1 հատ /	34286
84	ղեկի ուժեղարարի փոխարինում	11429
85	ղեկային համակարգ / 1 հատ /	28571
86	ղեկային համակարգի փոխարինում	11429
87	օդի կարգավորման էլեկտրոնային ցուցիչ / 1 հատ /	24286
88	դիմապակի մաքրող հեղուկ / 1 հատ /	1071

89	արգելակման օդային կարգավորիչ (վակում) /1 հատ/	12857
90	արգելակման օդային կարգավորիչի (վակում) փոխարինում /1 հատ/	4286
91	սրահի ֆիլտր /1 հատ/	2143
92	սրահի ֆիլտրի փոխարինում	1429
93	հովացման համակարգի ռադիատոր	15000
94	հովացման համակարգի ռադիատորի փոխարինում	5714
95	ղեկային համակարգի վռան	2143
96	ղեկային համակարգի վռանի փոխարինում	8571
97	ղեկի կոնտակտ/շլեյֆ/	2143
98	ղեկի կոնտակտի /շլեյֆ/փոխարինում	4286
99	ղեկի ուժեղարարի յուղ	
100	ղեկի ուժեղարարի յուղի փոխարինում	2143
101	հետևի լապտերի բլոկ	10000
102	հետևի լապտերի բլոկի փոխարինում	714
103	ապակիների էլեկտրական սեղմիչ	12143
104	ապակիների էլեկտրական սեղմիչի փոխարինում	1429
105	հովացման համակարգի (կոնդիցաների) լիցքավորում	14286
106	հովացման համակարգի (կոնդիցաների) վերանորոգում	14286
107	ներքևի լծակի վռան	571
109	ներքևի լծակի վռանի փոխարինում	1429
110	էլեկտրական մալուխների և սարքերի վերանորոգում	7143
111	վառարանի ռադիատոր	7143
112	վառարանի ռադիատորի փոխարինում	10714
113	դիմացի լապտեր	17143
114	դիմացի լապտերի փոխարինում	2143
115	քսենոնային լամպ	3571
116	քսենոնային լամպի փոխարինում	1429
117	քսենոնային լամպի բլոկ	5000
118	քսենոնային լամպի բլոկի փոխարինում	1071
119	արգելակման սկավառակ	5714
120	արգելակման սկավառակի փոխարինում	2143
121	շարժիչի ատամնավոր փոկ	2500
122	շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	5714
123	շարժիչի փոկ	2500
124	շարժիչի փոկի փոխարինում	1429
125	գեներատոր	30000
126	գեներատորի վերանորոգում	10714
127	գեներատորի փոխարինում	3571
128	հետևի լապտեր	12143
129	հետևի լապտերի փոխարինում	1429
130	բռնկման փական	8571
131	բռնկման փականի փոխարինում	4286
132	բռնկման գեներատոր	30000
133	բռնկման գեներատորի փոխարինում	2857
134	վառարանի ռադիատոր բացիչ	2143
135	վառարանի ռադիատորի բացիչի փոխարինում	4286
136	ներքևի լծակ	11429
137	ներքևի լծակի փոխարինում	2143
138	արգելակման սկավառակի կոմպլեկտ	11429
139	արգելակման սկավառակի կոմպլեկտի փոխարինում	4286
140	կցորդման սկավառակի կոմպլեկտ	20714
141	կցորդման սկավառակի կոմպլեկտի փոխարինում	9286
142	շարժիչի փոկի առանցկակալ	6429
143	շարժիչի փոկի առանցկակալի փոխարինում	4286
144	դիմացի թափարգելի հանում և տեղադրում	3571
145	հետևի թափարգելի հանում և տեղադրում	3571
146	դիմացի թափարգելի վերանորոգում	8571
147	հետևի թափարգելի վերանորոգում	8571
148	թափքի հղկում և ներկում դմ²	2143
149	դիմացի լապտերների կարգաբերում	2143
150	լեդ լույսեր	4286
151	լեդ լույսերի փոխարինում	714

152	հակամառախուղային լապտեր	6429
153	հակամառախուղային լապերի փոխարինում	714
154	ղեկային համակարգի յուղ	2143
155	ծնկաձև լիսեռի էլեկտրոնային ցուցիչ	10000
156	ծնկաձև լիսեռի էլեկտրոնային ցուցիչի փոխարինում	2143
157	Անվակունդի առանցկակալ	6429
158	Անվակունդի առանցկակալի փոխարինում	4286
159	Անվադողերի հեղույս և մանեկ	1429
160	անվադողերի հեղույսի և մանեկի փոխարինում	1429
161	Անվադողերի օդի ցուցիչ	2857
162	Անվադողերի օդի ցուցիչի փոխարինում	357

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով
Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011183010
ՀՎՀՀ 02531594
Գլխավոր քարտուղար՝Ա. Սաֆարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՋԻԷՆՋԻՔԵՅԳՐՈՒՊ» ՓԲԸ
Ք. Երևան, Արշակունյաց 119/12
Ակբա-Ագրիկոլ Բանկ ՓԲԸ
Հ/Հ 220563330384000
ՀՎՀՀ 01271541
Տնօրեն՝Ա. Գասպարյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ՀԾԿՀ-20/6-ԳՀԾՁԲ-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն